

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գեներալ-մայորի հարցրով գբաղվող
մարզային մշտական հանձնաժողովի
նիստի 14.01.2013թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՈՒ

Տեղի ունեցավ գեներալ-մայորի հարցրով գբաղվող մարզային մշտական հանձնաժողովի նիստը՝ հանձնաժողովի նախագահ Արագածոտնի մարզպետի տեղակալ Ա. Արսենյանի ղեկավարությամբ:

Մասնակիցներ՝

Գ. Դանիելյան- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս. Հովսեփյան- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցրով վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Ա. Անտոնյան- Աշտարակի քաղաքապետ, հանձնաժողովի անդամ,

Ս.Արամյան- Թալինի քաղաքապետ, հանձնաժողովի անդամ,

Գ. Աբրահամյան-Ապարանի քաղաքապետ, հանձնաժողովի անդամ,

Գ.Եղիազարյան- Աշտարակի քաղաքապետի տեղակալ, հանձնաժողովի անդամ,

Ա.Բասենցյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Պ. Համբարձումյան- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Ս.Զորյան- մարզպետարանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Ն. Դավթյան- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության գլխ.մասնագետ, հանձնաժողովի անդամ

Լ.Մելքումյան- «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա» ՀԿ-ի Աշտարակի մասնաճյուղ, հանձնաժողովի անդամ,

Ս.Բարնջյան- «Հայ օգնության միություն» կազմակերպության Աշտարակի մասնաճյուղ, հանձնաժողովի անդամ

Օրակարգ

1. <<Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2013 թվականի միջոցառումների ծրագրին>> և <<Հայաստանի Հանրապետության ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների ծրագրին >> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումների նախագծերին հավանություն տալու մասին:

Զեկուցող՝ Ա. Արսենյան- ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի նախագահ Ա. Արսենյանը ներկայացրեց <<Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2013 թվականի միջոցառումների ծրագրի >> և <<Հայաստանի Հանրապետության ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների ծրագրի >> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումների նախագծերը:

Ելույթներով հանդես եկան Ս. Հովսեփյանը՝ մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի անդամ և Լ.Մելքումյանը / «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա» ՀԿ-ի Աշտարակի մասնաճյուղ, հանձնաժողովի անդամ/, որոնք առաջարկեցին ծրագրերի իրականացման գործընթացին աջակցելու նպատակով տրամադրել որոշակի ֆինանսավորում:

Որոշվեց՝

1. Հավանության արժանացնել <<Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2013 թվականի միջոցառումների ծրագրի >> և <<Հայաստանի Հանրապետության ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի միջոցառումների ծրագրի >> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումների նախագծերը և ընդունել որպես հիմք մարզային հանձնաժողովի 2013 թվականի միջոցառումների ծրագրերը կազմելու համար :

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ տ-ին Գ. Դանիելյանին՝ մեթոդական ուղեցույցներ տրամադրել մարզի համայնքապետարաններին և այն ՀԿ-ներին, ովքեր համագործակցում են գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի հետ և կատարում են այդ ուղղությամբ իրազեկման աշխատանքներ համայնքներում:

ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ,
գենդերային հարցերով զբաղվող
մշտական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Արսենյան